

ՀԱՄԱՐԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼՑԱՆԸ ԵՎ «ՄՇԱԿԸ»

Լ. Ա. ԱՆՈՑԱՆ

1892 թ. դեկտեմբերի 19-ին վախճանվեց Գր. Արծրունին՝ «Մշակի» հիմնադիրն ու անփոփոխ խմբագիրը։ Դրան հետևեց լրագրի գործունեության դադարեցումը համարյա 10 ամսով, որի ընթացքում վճռվում էին նոր խմբագրի հաստատման ու «Մշակի» գաղափարական ուղղվածության հարցերը և նախորոշվում նրա գլխավոր աշխատակիցների հետագա գործունեությունը։

Վրաստանի կենտրոնական պետական արխիվից հայտնաբերված փաստաթղթերը¹ նոր լույս սփռեցին այդ լրագրի հետագա դիրքորոշման և գաղափարայնության խնդիրների վրա, պարզեցին թերթի խմբագրի ընտրության բազմակնճիռ հարցերը, որոնք հետաքրքրական էին հայ մամուլի պատմությանը զբաղվողների համար։ Եվ, որ չափազանց կարևոր է, հայ բանասիրությանը հայտնի դարձավ Համբարձում Առաքելյան գործչի և հրապարակախոսի գործունեությանը ժամանակին տրված պաշտոնական գնահատականը։ Գր. Արծրունու այրին՝ Մարիամ Մելիք-Աղամալյանը, դիմում է գրաքննական կոմիտե՝ Հ. Առաքելյանին «Մշակի» խմբագրի պաշտոնում հաստատելու խնդրանքով։ Սակայն մամուլի գործերի գլխավոր վարչությունը մերժում է այդ թեկնածությունը, նկատի ունենալով մի քանի հանգամանք։ Առաջին՝ Հ. Առաքելյանը չունի բարձրագույն կրթություն։ Երկրորդ՝ Առաքելյան հրապարակախոսի գործունեությունը քաղաքական վստահություն չէր ներշնչում, քանզի նա 1882 թ. գործուն մասնակցություն էր ունեցել Ս. Հախումյանի՝ Շուշիում հրատարակվող «Գործ» ամսագրին, որի առաջին համարը բռնադրավիլ էր գրաքննության կողմից։ Այդ համարում էր զետեղված նաև Հ. Առաքելյանի «Հողատիրության և կալվածատիրական խնդիրը Անդրկովկասում» հոդվածը, որը նույնպես, ի թիվս այլ նյութերի, որակվել էր որպես «սոցիալիստական և վտանգավոր քաղաքական ուղղություն» կրող։ Անվստահություն էր ներշնչում նաև Առաքելյանի գործունեության այն շրջանը, երբ 1892 թ. կաթողիկոսական ընտրությունների նախօրյակին նա, իբրև պարսկա-հնդկական թեմի աշխարհիկ պատգամավոր, պաշտպանել էր Մ. Խրիմյանի թեկնածությունը։ Նշվում է նաև, որ իբրև բարեգործական ընկերության քարտուղար Հ. Առաքելյանը ևս արժանացել է գրաքննական կոմիտեի անբարյացակամությանը, շեշտվում, որ Արծրունու կենդանության օրոք նրան չի հաջողվել իր գաղափարներն անցկացնել մամուլում, որովհետև Արծրունին հետևողականորեն դիմադրում էր 1880-ական թվականների հայ նարոդնիկ գործիչների տպագրությանը «Մշակի» էջերում, այնինչ նրա մահից անմիջապես հետո գրաքննության բռնադրված հոդվածները, որոնք պատկանում էին նաև Հ. Առաքելյանի գրչին, ունեին արմատական ուղղություն։ Հայ պատմագրական և բանասիրական գրականության մեջ ոչ մի հիշատակություն չկա այդ տարիներին Առաքելյանի՝ նարոդնիկական հոսանքին պատկանելու վերաբերյալ, և Կովկասի գրաքննական կոմիտեի գրավոր վկայությունը հնարավորություն է տալիս ծանոթանալու նրա գործունեության նոր կողմերին։ Չնայած Հ. Առաքելյանը չհաստատվեց «Մշակի» խմբագրի պաշտոնում, բայց մնաց թերթի գլխավոր աշխատակիցներից ու հրատարակիչներից մեկը, մինչև 1913 թ. հոկտեմբերի 20-ը, երբ վախճանվեց Ալ. Քալան-

թարը: Դրանից հետո Առաքելյանը դարձավ թերթի խմբագիրը և աշխատեց մինչև իր ողբերգական մահը:

2. Առաքելյանը ծնվել է 1855 թ. Շուշի քաղաքում: 1865-ին ծնողների հետ տեղափոխվում է Թավրիզ, որտեղ էլ տիրապետում է պարսկերենին, գերմաներենին, ֆրանսերենին: Տասնինամյա հասակում վերադառնում է Շուշի, ապա ընդունվում Բաքվի ռեալական ուսումնարան: Ավարտելով այն, 1879 թ. սկսում է ուսանել Մոսկվայի Պետրովսկու անվան Նրկրագործական ակադեմիայում, բայց կրթությունը կիսատ է թողնում: 1881-ին նա վերադառնում է Շուշի, ուր տեղի թեմական ու օրիորդաց դպրոցներում աշխատում է որպես տեսուչ: Մեկ և կես տարի անց ժառանգական գործերով մեկնում է Պարսկաստան, որտեղ էլ 1885-ի կաթողիկոսական ընտրությունների ժամանակ ընտրվում է պարսկա-հնդկական թեմի աշխարհիկ պատգամավոր: Նա նույն թեմի պատգամավորն էր նաև Մ. Խրիմյանի ընտրության ժամանակ: 1892-ին 2. Առաքելյանը վերջնականապես տեղափոխվում է Թիֆլիս: Այստեղ նա հրատարակչական ընկերության խմբագրական մասնաժողովի անդամ էր, դրամատիկական ընկերության փոխնախագահ, Գայանյան օրիորդաց դպրոցի հոգաբարձության նախագահ: Այս շրջանում ունենալով լիբերալ հայացքներ, 2. Առաքելյանը 1905-ից հարեց սահմանադիր-ռամկավարական (կադետական) կուսակցությանը և դարձավ կադետների գաղափարների ջերմ պաշտպան արևելահայ իրականության մեջ: 1906 թ. «Մշակի» առաջին համարներում գործիչները թերթը հայտարարեցին սահմանադիր-ռամկավարների օրգան, միաժամանակ տպագրելով ու մասսայականացնելով այդ կուսակցության կանոնադրությունը և ծրագիրը: Նրանք պահանջում էին ժողովների ու միտինգների ազատություն, անկախ ընկերությունների և միությունների ստեղծման հնարավորություն, տեղական ինքնավարության ապահովում, հոգահատկացման ու հողաշահության գործի վերակազմում, գյուղացիների հողաբաժնի ավելացում, գործադուլի իրավունք, ութամյա աշխատանքային օր, կանանց և երեխաների աշխատանքի իրավունք, հիվանդության և այլ դեպքերում պետական ապահովություն, տարրական դպրոցներում ընդհանուր և ձրի կրթություն, բարձրագույն դպրոցներում դասավանդման լիակատար ինքնավարություն և ազատություն, սահմանադրական կարգով ուսանողական ու բանվորական աղստ կազմակերպությունների ստեղծման հնարավորություն: Սակայն, կադետական կուսակցության ջատագով լինելով հանդերձ, «Մշակի» գործիչները ի տարբերություն առաջինի, դավանում էին դուռտ ազգային իդեալներ: Հայ ռամկավարներն իրենց գործունեությունը ծավալում էին չլիսավորապես հայ ազգային խնդիրների շրջանակներում:

«Մշակի» գործիչները սոցիալիզմը որպես ապագա չէին ընդունում և լինելով ռեալիստական քաղաքականության կողմնակիցներ, պնդում էին, որ իրենց ծրագրի մեջ ներառում են միայն գործնականապես իրականացանալի պահանջներ, դրանք էին՝ բոլոր քաղաքացիներն առանց սեռի, դավանության և ազգային խտրականության հավասար են օրենքի առաջ, յուրաքանչյուր բաղաքացու տրվում է խղճի ու դավանանքի ազատություն, յուրաքանչյուր անհատ ազատ է ինչպես բանավոր, այսպես էլ մամուլի միջոցով մտքերը հրապարակորեն արտահայտելու, իսկ սխալ ելույթի դեպքում՝ պատասխանատու է միմիայն դատարանի առաջ:

Հեղափոխության վերելքով պայմանավորված մոլեռանդ գրաքննության պայմաններում «Մշակի» աշխատակիցները հաճախ օգտագործում էին եզրապոսյան լեզուն՝ երկրում տիրող իրավիճակը մերկացնելու համար: Այդ առումով հիշատակելի է 2. Առաքելյանի «Մեր հարևան երկրները» հոդվածը, որտեղ հեղինակը դա փորձում է ասել հարևան արևելյան երկրներում տիրող այլանդակ բարքերի քննադատությամբ:

«Նանքերը, կուսակալները, հոգևորական կալվածատերերը,—գրում էր Առաքելյանը,—դարձյալ շարունակում են կեղեքել թշվառ պարսիկ ժողովուրդը: Երկրի մեջ չկան կայուն, հաստատ օրենքներ, գյուղական ազգա-

բնակչության վիճակը սոսկալի է, զեղծումները, հարստահարությունները ամեն տեսակի և զույնի անդադար կատարվում են և քամվում, ծծվում է ամբողջ երկրի հյուսիսն ու ծածրը²։ Ապա հոգվածագիրն անդրադառնում է Թուրքիայում աիրող դրուժյան նկարագրությանը և նկատում, որ ժողովուրդների վիճակն ավելի ծանր է։ Թուրքերը ևս երկյուղ են կրում եվրոպական կարգուններից, ռեֆորմներից։ Հստ Թուրքիայի քաղաքագետների, որոնք «ալլահի կամքով» ղեկավարում են լայնածավալ կայսրության բախտը, թող երկիրը շարունակի իր այժմյան նույն գոյությունը...»։ Եվ սա հասկանալի է, եզրակացնում է հեղինակը, քանի որ նվաճողի հետ շփումը կկործաներ փաշայական Թուրքիան, իսկ կալվածատերերն ավելի նպատակահարմար էին համարում ամբողջ Թուրքիայի, քան իրենց կործանումը։ Ահա ինչու երկիրը դարձել էր «թատերաբեմ ցեղական, ազգայնական թշնամությունների, անլուր հարստահարությունների և վայրագ արհամիրքների»³։

Լինելով «Մշակի» գլխավոր աշխատակիցներից մեկը, Հ. Առաքելյանը չէր կարող լանդրադառնալ հայ ժողովրդին հուզող խնդիրներին։ Արևմտահայաստանը ծայրահեղ ծանր դրության մեջ էր։ Արդեն 1907-ին թուրքական կառավարությունն արտաքսում էր բնիկ հայ ժողովրդին Մուշի և Բիթլիսի նահանգներից, չդիմանալով ազգային ճնշումներին, հայերը փախչում էին էրզրումից և Դիարբեքից։ Կառավարությունը, անզոր զսպելու հեղափոխական ագիտացիան քրդերի և երիտասարդ թուրքերի մեջ, մտադիր էր խեղդել այդ շարժումը հայկական արյան մեջ։ Առաքելյանն անդրադառնում է այս հարցին, մեջբերում անգլիական թերթերից քաղվածքներ և ահազանգ հընչեցնում թշվառ հայ ժողովրդին վերջնական կորստից փրկելու համար։ Նա գրում է. «Հերթ է թշվառ տաճկահայերին օրորեն նույն երգերով, նույն խաբուսիկ խոստումներով, քաղաքական հանգամանքները փոխվել են, իսկ պայքարի պրիմիտիվ ձևը հայությունը տանում է դեպի գերեզման...»⁴։

«Հայաստանը մոռացված» առաջնորդողում⁵ Համբ. Առաքելյանը գրում է, թե տասնյակ տարիներ ի վեր «Հայկական հարցը» շոշափվում է ամենատարբեր առյուծներում, սակայն այժմ էլ, երբ Ռուսաստանը և Անգլիան նոր դաշնադիր են կնքում, նորից խնդիրը չի շարժվում մեռյալ կետից՝ մնալով քաղաքական խաղերի առարկա։ Անգլիայի բաղձանքն է սուլթանից որոշ արտոնություններ կորզել, իսկ Ռուսաստանն ամեն ինչ անում է, որ Թուրքիան Գերմանիայի գիրկը չընկնի, ահա թե ինչու երկու երկրներն ավելի ձեռնտու համարեցին զոհել Մերձավոր Արևելքը...

Մշակականները զավեշտով են ընդունում Արդու Համիդի սահմանադրության հուշակումը, իսկ Հ. Առաքելյանը «Մտքեր և փաստեր» բաժնում քննադատում է երիտթուրքերին, հենց սկզբից չհավատալով նրանց որևէ խոստման։ Նա գրում է. «Որքան հայտնի է, երիտթուրքերի ծրագիրը բացասում է առանձին ազգություններին կամ ժողովուրդներին որևէ ավտոնոմիա տալու գաղափարը. նա պահանջում է ընդհանուր ռեֆորմներ ամբողջ Օսմանյան կայսրության համար, նա ճանաչում է միայն օսմանյան քաղաքացի և ոչ թուրք, քուրդ, հայ, հույն։ Պետք է լինի մի ընդհանուր օսմանյան պետություն մեծազոր փադիշահի գայիսունի ներքո, իսկ տիրապետող կրոնը պետք է լինի իսլամը։ Արդյոք այդպիսի հանգամանքներում ջուրը չեն ընկնում թե՛ Բեռլինի, թե՛ Կրետեի դաշնագրերով և թե՛ Մայիսյան ծրագրերով հայերին խոստացված ռեֆորմները, իսպահովությունները, հայերի ձեռք բերած միջազգային իրավունքները...»⁶։ Նրա կարծիքով չափազանցությունների դիմել պետք չէ, քանի որ Թուրքիան կատարյալ դժոխք եղել է և մնում է ոչ միայն

2 Մշակ, 1905, № 1։

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում, 1907, № 68։

5 Նույն տեղում, № 145։

6 Նույն տեղում, 1908, № 153։

հայերի, այլև այդ պետության ամբողջ ազգաբնակչության համար և այդ դժոխքում ոչ մեկը չի ունեցել և չի ունենալու ոչ կյանքի, ոչ գույքի, ոչ պատվի ապահովություն: Թուրքիայում քաղաքացի չկա, այլ կա հպատակ, ստրուկ՝ զրկված կյանքի ամենատարրական իրավունքներից... Թերթը գրում է, որ ֆանատիկոս խուժանը, դարեր շարունակ արյուն թափելով, դեռ չի կշտացել դժոխային վալիքների հաճույքից: «Հայկական ահռելի աղետը» հոգովածում (նույն տեղում) Համբ. Առաքելյանը գրում է. «Բովանդակ հայությունը պետք է ընկղմվի խորին սուգի մեջ, ի լուր այն սոսկալի ջարդերի, որոնց ենթակա է այժմ հայ ժողովուրդը՝ խռովություններով, ապստամբությամբ ալեկոծվող, տարուբերվող Թուրքիայում»⁷: Իսկ հեռագրերը նորանոր սարսափազդու լուրեր էին բերում Ադանայից, Կիլիկիայից. ողջ Թուրքիայի հայաշատ վայրերից: Ահա թե ինչու «Մշակի» գործիչները կարծում էին, որ հայերը պիտի պատրաստ լինեն ինքնապաշտպանության, այս ուղղությամբ ձեռք առնեն հնարավոր բոլոր միջոցները: Նրանք ապստամբելու կամ նախահարձակ լինելու կոչ չէին անում, բայց ցանկանում էին հասկացնել ժողովրդին, որ օրհասական պահին նրանք գոնե պաշտպանվել կարողանան: Համբ. Առաքելյանը հորդորում էր Զավեն արքայի սկսած հրաժարականը հետ վերցնել, քանի որ ազգի համար աղետալի ալդ պայմաններում նրանման գործունյա, ժիր, իր պարտականություններն ու իրավունքները ըմբռնող մեկը հրապարակում չկար:

Համաշխարհային առաջին պատերազմի լուր խորին տագնապով ընդունեցին «Մշակի» գործիչները: «Ներկա պատերազմը և հայ ժողովուրդը» առաջնորդողում⁸ Հ. Առաքելյանը հորդորում է հայերին՝ հավատարիմ հպատակի պես կռվել հանուն Ռուսաստանի, քանի որ սա միակ քրիստոնյա երկիրն է, այնուամենայնիվ, որ հոգացել է մեր ցավերը... Նա հորդորում է Ատրպատականի հայերին ոչ թե գաղթելու, որը, ըստ նրա, մեծ հարված է հայ դատին, այլ Ռուսաստանի տարբեր անկյուններ գաղթած հայերի վերադարձը դեպի իրենց հայրենիքը և ուսև զորքի հետ պաշտպանելու իրենց երկիրն ու օջախը թուրքերի ու քրդերի հարձակումից:

1914 թվականի հոկտեմբերի 18-ին Համբ. Առաքելյանը հայտնում է, որ Թուրքիան վերջապես առանց պատերազմ հայտարարելու հարձակվել է Ռուսաստանի վրա: Նա գրում է. «Այն օրից, որ թուրք պետականությունը ոտք կոխեց Նվրոպա և Ասիա, նա հանդիսացավ միայն իբրև կործանարար ուժ, ոչ մի շինիչ, ստեղծագործ հատկություն և ընդունակություն նա ցույց չտվեց. նա ավերեց, ամայացրեց, մոխիրով ծածկեց պողպատ, արգավանդ դաշտեր, ամբողջ երկրներ, նա մարդկային դիակներից լեռնակույտեր ստեղծեց իր կոտորածներով, նա մարդկային արյան վտակներով ոռոգեց իր ավերած երկրները: Նա հանդիսացավ մի տեսակ գանգրեն քաղաքակիրթ մարդկության մարմնի վրա, մի փտախտ, որ պետք է կտրել և դեն գցել, առողջ մարմինը վարանումից ազատելու համար...»⁹: Ըստ Առաքելյանի, հասել էր ժամը՝ վերջ դնելու թուրքական իշխանությանը և աղատելու բազմաթիվ կուլտուրական ազգեր ու ժողովուրդներ նրա լծից:

Արժույթն ու հետնորդները և մասնավորապես Ալ. Քալանթարը «դեպի գյուղ» նշանաբանով եկան թերթ և բնական է, որ մեծ տեղ էին հատկացնում գյուղատնտեսության հարցերին: Ըստ Քալանթարի և իր գործընկերների, միայն կապիտալիզմի բերած նոր ձևերը, մեթոդները, նոր գործիքներն ու սարքավորումները կարող էին զարկ տալ ինստենսիվ գյուղատնտեսությանը: Այս իմաստով նա պաշտպանում էր գյուղատնտեսությունը մեքենայացնելու և գիտական սկզբունքների վրա տեղափոխելու գաղափարը: Նա ոչ միայն պրոպագանդում էր դա, այլ ամռան ամիսներին սեփական նախաձեռնու-

⁷ Նույն տեղում, 1909, № 73:

⁸ Նույն տեղում, 1914, № 160:

⁹ Նույն տեղում, 1914, № 235:

թյամբ այս կամ այն գավառում, իսկ ավելի հաճախ՝ Ղարաբաղի խառնուրդում, կազմակերպում էր գյուղատնտեսության մասնագետների ամառային դասընթացներ, որոնց մասնակցում էին ինչպես Հայաստանի, այնպես էլ հայաշատ կենտրոններից ժամանած գյուղատնտեսներ և ուսուցիչներ, որոնք վերադառնում էին նորագույն գիտության նվաճումների հսկայական պաշարով զինված: Քալանթարը գիտեր, որ գյուղացին նորությունները դժվարությամբ է ընդունում, րայց նաև համոզված էր, որ դրանց առավելությունների դրսևորման դեպքում աստվածավախ այդ մարդիկ կընդունեն դրանք: Ահա ինչու նա և թերթի մյուս գործիչներն ամսոսանք էին հայանում, որ հայ մտավորականի համար ձայն բարրաոո հանապատի է մնում իրենց հայրենանվեր կոչը՝ գնալ դեպի գյուղ, դուրս բերել գյուղը թշվառ վիճակից:

Մշակականներին առարկում էին հայ բուլճակներ Ս. Սպանդարյանը և Բ. Կնունյանցը, պնդելով, որ հայ մտավորականության ապրելակերպի համար չկան տարրական պայմաններ, ահա ինչու նա մոռանում է գյուղի ճամփան:

Հայրենիքի շենացման համար, պատասխանում է «Մշակը», այո, պետք է նաև անձնագոհության դիմել և այս կերպ միայն դրել գյուղական խավարը, օգնել հայրենակիցներին առաջագիմելու...: Թերթի գործիչները առաջին հերթին Այ. Քալանթարը, Ա. Աթանեսյանը, Հ. Առաքելյանը մատնանշում էին հողաբաժանության սխալները, երբ քարքարոտը հասնում էր գյուղացուն, իսկ վարելահողը, բերքատու այգիները՝ գյուղի տերերին: Նրանք պահանջում էին նոր հողաբաժանում, գյուղերում վարկատու ընկերությունների հիմնում, որոնք հնարավորություն կտային զարգացնել գյուղատնտեսությունը: Նրանք պահանջում էին հող հատկացնել աղքատ գյուղացուն, որը դրա դիմաց ոչինչ չունի տալու, բայց ուներ ամուր բազուկներ, աշխատելու եռանդ: Այս դեպքում մշակականները որոշակի արդյունք էին ակնկալում: Նրանք դեմ էին նաև գյուղում նոր շերտավորում կազմած զանազան գրագիրների, վաշխառուների դասին, որոնք կոպակներ հատկացնելով անգրագետ գյուղացուն, հետագայում հարյուրապատիկ հատուցում էին պահանջում: Օրենքներին անգիտակցի գյուղացուն այդպիսի ցեցերի ձեռքից միայն գյուղի մտավորականները կարող էին զերծ պահել, ինչպես նաև փոխատու բանկերն ու հիմնարկությունները, որոնց ընդարձակման համար պայքարում էր թերթը:

Քալանթարը չէր ընդունում հեղափոխական շարժումներն ու սոցիալիզմը: Նրա կարծիքով բուրժուական հասարակարգը կարող էր կարգավորել առաջացած հակասությունները, իսկ ցնցումներն ու բախումները կարող էին միայն ավելի խորացնել այդ հակասությունները: Նրանց կարծիքով, բուրժուական հասարակության զարգացումը ժամանակի հարգ է, այսինքն՝ բուրժուական հասարակարգի ապագան նրանք տեսնում էին իր կենսունակության մեջ: Ահա թե ինչու թեև մշակականները դեմ էին միապետական ռեժիմին, մերժում էին 1905—1907 թթ. հեղափոխությունը, որովհետև գտնում էին, որ բանվոր դասակարգը դեռ այն ուժը չունի, որ կարողանա կործանել ռոմանովների 30-ամյա դինաստիան: Այլ էր նրանց վերաբերմունքը 1917 թ. փետրվարյան հեղափոխությանը, երբ կործանվեց միապետությունը և ստեղծվեց ժամանակավոր կառավարություն: Նրանք համակրանքով ընդունեցին բուրժուա-դեմոկրատական որակված հեղափոխությունը, քանի որ իշխանության գլուխ էին անցել կադետական կուսակցության շատ պարագլուխներ, որոնք հարում էին հայ սահմանադիր-ռամկավարները: Վերջապես, ըստ «Մշակի», կատարվեց անսպասելին. ազատությունը խուժեց անժայռածիր Ռուսաստանի բոլոր անկյունները, մարդիկ հնարավորություն ստացան ազատ խոսելու, գրելու, ժողովներ գումարելու, ստեղծագործելու...

Շարունակվող առաջին համաշխարհային պատերազմը, որ միլիոնավոր հյանքեր էր խլել, ըստ ժամանակավոր կառավարության, պետք էր հասցնել հաղթական վախճանի, իսկ սա նշանակում էր, որ ռուսական զորքն իր հաղթարդավն էր շարունակելու Արևմտյան Հայաստանում, և վերջնականապես իրականանալու էր հայ ժողովրդի դարավոր երազանքը՝ թուրքական յաթա-

ղանից փրկված տեսնել Արևմտահայաստանը: Այս պարագայում նոր հեղափոխության նշանաբանը սվիններով էր ընդունվում մշակականների կողմից, քանի որ բուլշևիկները պահանջում էին հաշտության շուտափույթ կրնալը՝ պատերազմող կողմերի միջև՝ առանց ռազմատուգանքի և բռնազավթումների: «Մշակը» գիտակցում էր, որ դա նշանակում է Արևմտահայաստանի վերջնական կործանում և բոլոր միջոցներով պայքարում էր բուլշևիկների և նրանց հայ համախոհների դեմ: Հ. Առաքելյանի գործուն մասնակցությամբ 1918-ին ստեղծված Հայ ժողովրդական կուսակցությունը արտահայտում էր նույն գաղափարները: Հայոց Ազգային խորհրդի մի որոշումը՝ Անդրանիկին Կովկասյան զորքերի գլխավոր հրամանատար նշանակելու առիթով, մեծ ոգևորությամբ ընդունվեց «Մշակի» կողմից, բայց դասալքությունը, անպատժելիությունը, որ տիրում էր մեր զինվորների ու սպաների շարքերում ի շիջ դարձրին Անդրանիկի ջանքերը: Թերթը որպես աղետ գնահատեց էրզրումի անկումը և հեռատեսորեն գուշակեց, որ դրան հետևելու են Կարսը, Սարիղամիշը: «Մշակն» անհեռանկար որակեց նաև Արևելքի մութ ցեղերին զինելու և համաշխարհային հեղափոխություն կատարելու բուլշևիկյան գաղափարը, գտնելով, որ դա կարող է հանգեցնել ոչ միայն Արևմտահայաստանի, այլ ողջ հայության կործանմանը:

«Մշակն» անարգանքի սյունին էր դաժնում կարմիրների այն հայ պրոպագանդիստներին, որոնք դասալքության թույլը տարածում էին նաև Զանգեզուրի պաշտպանների շրջանում՝ աշխատավորությանը կոչ անելով վայր դնել զենքը և հավատալ արդեն «հեղափոխական» դարձած մուսուլման խուժանին: Թերթը դա որակում էր հանցավոր արարք ողջ հայության դեմ:

Հայկական առաջին հանրապետության հռչակումը «Մշակը» իրատեսորեն ընդունեց: Թերթի գործիչներն ուրախ էին հանրապետության հռչակման առիթով, սակայն և ձեռնպահ, որովհետև կառավարության ամբողջ կազմը բաղկացած էր Դաշակցության կուսակցության անդամներից: Հայ ժողովրդական կուսակցության անդամագրված մշակականները պահանջում էին հայոց նորընտիր պառլամենտում կենսագործել բազմակուսակցականության սկզբունքը: Հետագայում «Մշակը» բոլոր հայերին կոչ էր անում սատար կանգնել նորաստեղծ կառավարությանը, բոլոր ճանաչված մասնագետներին ու մտավորականներին խնդրում վերադառնալ հայրենիք և իրենց փորձն ու գիտելիքները ներդնել նորաստեղծ Հայաստանի բարգավաճման համար:

Հ. Առաքելյանի «Մշակը» ողջունում է Անդրանիկի «Հայաստանին» և գրում, որ այն ամբողջովին պետք է նվիրվի թուրքահայ դատին և չի պատկանելու որևէ հոսանքի կամ կուսակցության¹⁰: «Մշակը» հաղորդում է Թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճում կայացած թուրքահայերի ժողովի մասին, որը ղեկավարել է Անդրանիկը: Նա 21 հոգուց բաղկացած մի հանձնաժողով է ստեղծում, որը վարելու էր թուրքահայոց գործը¹¹, ինչ վերաբերում է Հ. Առաքելյանի Հայ ժողովրդական կուսակցության պահանջին՝ Թուրքահայաստանի հարցի նկատմամբ, դա ընդունում է որպես միջազգային հարց, որը կարող է լուծում ստանալ միայն միջազգային կոնգրեսում, իսկ Հայ. ժողովրդական կուսակցությունը ամեն ջանք պիտի դորժադրի, որ այդ հարցը լուծվի միմիայն թուրքահայերի ցանկությամբ¹²:

«Մշակի» գործիչները մեծ ուշադրություն էին դարձնում ազգային հարցին: Հայ ժողովրդի համախմբման, միասնականության գաղափարը պրոպագանդվում էր անընդհատ, չնայած ցարական գրաքննության արգելքներին: Եվրոպական երկրներում երիտթուրքերի կուսակցության սաղմերը երևալու առաջին իսկ պահից մշակականները չհավատացին նրանց խոստումներին և ամեն գնով աշխատում էին հետ պահել հայությանը երիտթուրքական քա-

10. Նույն տեղում, 1917, № 63:

11. Նույն տեղում, № 65:

12. Նույն տեղում, 1917, № 70:

բողոքությունից, 1908 թ., երբ Թուրքիան հռչակվեց «սահմանադրական երկիր», և այնտեղ սկսեցին տնօրինել իթթիհատականները, «Մշակը» զգուշացրեց, արդեն որերորդ անգամ, ցուցաբերել շրջահայեցություն, իրերի գրությանը զգաստ գնահատական տալու կարողություն: Երիտթուրքերի հետ կապված անհիմն ոգեորությունը անմիջապես հետևեց Ադանայի կոտորածը: «Մշակն» այլևս չհավատաց եվրոպական տերությունների նոր խոստումներին՝ Արևմտահայաստանում նոր ռեֆորմներ իրականացնելու վերաբերյալ, չհավատաց նոր, քրիստոնյա նահանգապետերի առաքելությանը, նորից կոչ անելով զգուշավորություն: Թերթը մեր անհեռատես քաղաքականությանը վերագրեց Մեծ եղեռնը և դրանից հետո էլ, երբ կովկասյան ռազմաճակատում ռուսական զինքը հրաշքներ էր գործում, երբ հայկական քաղաքների մեծ մասն ազատագրվում էր թուրքական լծից, «Մշակը» հորդորում էր չկորցնել իրականության զգացումը, գրելով, որ այդ գործը Արևմտահայաստանի ոչ բոլոր բնակավայրերն է ազատագրելու և որ թուրքերի տնօրինած տարածքներում ժողովուրդը կամա թե ակամա ենթարկվելու է տանջանքների ու զրկանքների: Թերթի վերջին հուլիսը՝ ազատագրված տեսնել Թուրքահայաստանը, ի դերե ելավ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակով: «Գործարանը բանվորներին, հողը՝ գյուղացիներին» բոլշևիկյան կոչը դասալիք դարձրեց ողջ ռուսական դորքը, որոնք գցելով կամ թուրքերին վաճառելով զենքն ու զինամթերքը, շտապում էին տուն՝ «հարստանալու», մեկ անգամ ևս համարյա ջախջախված թուրքերին հնարավորություն տալով իրականացնել վաղեմի երազանքը՝ երկրի երեսից ջնջելու ողջ հայությանը նաև արևելյան հատվածում: «Մահ կամ ազատություն» սկզբունքին հետևող թերթի գործիչներն այդ օրերին դիմում էին վրաց մտավորականությանը, ողջ ժողովուրդին՝ միասնական ճակատով պայքարելու դարավոր թշնամու դեմ, հաստատ համոզմունք հայտնելով, թե հայերի ճակատագիրը բաժին է ընկնելու նաև վրացիներին, սակայն դա որևէ արդյունք չտվեց: Ընդհանուր թշնամուն դիմագրավելու փոխարեն վրացիները բանակցություններ էին վարում Գերմանիայի հետ, չհասկանալով, որ այդքան հեշտությամբ ռուսները Անդրկովկասը չեն դիջելու եվրոպական որևէ երկրի:

Հ. Առաքելյանի «Մշակը» հանդես էր գալիս որպես գաղափարական գրականության ջերմ պաշտպան: Թերթն իր շուրջն էր հավաքել գրական և գրաքննադատական այնպիսի հզոր ուժերի, ինչպիսիք էին Հ. Սուրխաթյանը, Շիրվանդադեն, Վ. Տերյանը, Ատ. Զորյանը, Պ. Մակինցյանը, Շ. Կուրդիյանը, Դ. Անանունը, Լեոն, Հր. Աճառյանը, Մ. Արեղյանը, Աշ. Հովհաննիսյանը և այլք: «Մշակի» այն հայտարարությունը, թե տեղ է տալու բոլոր կուսակցությունների ներկայացուցիչների հոգևածներին անխտիր, եթե նույնիսկ չբաժանի նրանց կարծիքը, իրականացված փաստ էր: Ժամանակակից հայ գրողներից բացի, թերթն իր էջերը լայնորեն բացել էր ինչպես համաշխարհային ու եվրոպական, այնպես էլ ռուս գրականության ականավոր ներկայացուցիչների առջև, վերլուծել Շեքսպիրի, Բայրոնի, Հյուգոյի, Դոստոևսկու, Բելինսկու, Դոբրոլյուբովի, Պուշկինի, Լերմոնտովի, Տոլստոյի, Գորկու, Բլոկի, Բալլմոնտի, Արցիբաշևի, Կոլցովի, Բյուսովի և այլոց երկերը: Թերթը մեծ տեղ է հատկացրել նաև թարգմանական գրականության հարցերին, նկատի ունենալով, որ այն ամեն մի ժողովրդի կյանքում կատարելիք մեծ դեր ունի: Թերթում իրենց պատշաճ դերն ունեին թատերական գրախոսները, արվեստի բոլոր բնագավառներին վերաբերող նյութերը, Կոմիտասին, Հովհ. Ավագովսկուն, Վ. Մախոյանին, Վ. Փափազյանին, Արմ. Շահմուրադյանին, Սիրանուշին, Հովհ. Արեղյանին նվիրված հոգևածաշարերը: «Մշակը» ընդարձակ հոգևածներ է տպագրել նաև արևմտահայ գործիչների մասին, ընթերցողների դատին հանձնելով Գր. Զոհրապի, Սիամանթոյի, Ռ. Սևակի, Դ. Վարուժանի, Վ. Թեքեյանի նորատիպ գործերը: Չնայած գաղափարական ինչ-ինչ հակամարտություններին, «Մշակը» ըստ արժանվույն է գնահատել նաև Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Զարենցի, Ավ. Ահարոնյանի, Դ. Դեմիրճյանի, Հ. Հակոբյանի, Շ. Կուրդիյանի, Վ. Տերյանի և մյուսների ստեղ-

ծագործությունները: Ստ. Մալխասյանցը, Ալ. Քալանթարը, Հ. Առաքելյանը բարեկամական կապեր ունեին Ն. Մառի, Թ. Թորամանյանի, Գ. Բաշինջաղյանի, Ալ. Սպենդիարյանի, Ռ. Մելիքյանի և ուրիշների հետ. որոնք իրենց ստեղծագործություններից բացի նաև թղթակցում էին թերթին, ընթերցողներին հնարավորություն ընձեռելով առաջին անձերից ստանալու մասնագիտական ամենանուրբ ու հրատապ տեղեկությունները: Այս շրջանում էլ «Մշակը» պաշտպանեց գրականության մեջ կյանքի ճշմարիտ արտացոլման հարցը, մերժելով ոռոմանտիկ ու սենտիմենտալ մորմոքները:

Թերթի հեղինակները հասարակական կյանքի բոլոր օղակներն օգտագործում էին ազգի լուսավորության համար, միայն այս ուղիով առաջագիմության հասնելու նպատակով: Եվ բնական է, որ Արծրունու նման, նրանք էլ պահանջում էին մարդու, կնոջ, ընտանիքի, համայնքի, ողջ հասարակության զարգացում: Այդ դերը մեծ մասամբ հատկացնելով եկեղեցուն, այնուամենայնիվ, նրանք պահանջում էին հիմնական վերանորոգումներ մատաղ սերնդի կրթության և դաստիարակության համակարգում: Այս իմաստով Թերթը ուշադրություն էր դարձնում ուսուցման արդիականությանը, երկու սեռերի փոխհարաբերության հարցերին, հայրերի և որդիների հիմնահարցին: Թերթը դնում է նաև անհատի ազատության պահանջը՝ հիմնված ընտանիքի անդամների հավասարության վրա, պահանջելով պատշաճ տեղ հատկացնել նոր սերնդին, որը հակված էր դեպի նահապետականի ոչնչացումը և նորի, առաջավորի ընդունումը:

Թերթի գործիչները քննադատում էին էջմիածնի Գևորգյան ճեմարանում տիրող հնացած, պարտադիր բարքերը, որոնք առիթ դարձան նրա սաների 1906—1907 թթ. հուզումներին և այդ կաշկանդիչ մթնոլորտն էր, որ ստիպեց Կոմիտաս վարդապետի նման տաղանդավոր երաժշտին շահագործել հոգևոր պետերի հետ և դեգերել Թուրքիայում: Անդրադառնալով ողջ Ռուսաստանի տարածքում բռնկված ուսանողական հուզումներին, «Մշակն», այնուամենայնիվ, հայ ուսանողներին քարոզում էր շնթարկվել մոլթ ուժերի այն կոչերին, որոնք պահանջում էին ուսանողներից դասադուլների միջոցով հասնելու իրենց պահանջների բավարարմանը: Թերթը այդպիսի պրոպագանդը համարում է խավարամիտների արշավ, քանի որ հայ ազգին նոր սերնդի կրթված ու զարգացած երիտասարդ ուժեր էին հարկավոր, իսկ դասադուլները միայն նպաստում էին տգիտությանը: Այսինքն, պահանջներ հարկավոր են, բայց ոչ դասերի, գիտելիքների հաշվին: Ոսկու Ձոն թղթակիցը Մոսկվայից, Գր. Զախուշյանը Նոր-Նախիջևանից, անդրադառնալով այս հարցին, հայ ուսանողներին հորդորում էին գիտակցական մոտեցում ցուցաբերել անարխիստական կոչերին ու խժոժություններին:

«Մշակը» պահանջում էր նոր, եվրոպական դպրոցի մեթոդների և ձևերի կիրառում նաև հայկական դպրոցներում, խրախուսում այն գործիչներին (Գ. Լևոնյան, Տ. Նազարյան, Շիրվանզադե), ովքեր սկզբում մեր մեծատուններից, ապա նաև նորաստեղծ Հայաստանի Հանրապետության կառավարությանից պահանջում էին ոչ մի միջոց չխնայել մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության համար, որովհետև միայն այդ միջոցով էր կարելի հասնել զարգացման բարձր աստիճանի: Ահա թե ինչու, երբ սկզբում Ալեքսանդրապոլում, ապա Երևանում բացվեց համալսարան, Թերթն ամեն համարում տեղեկություններ էր տալիս նորաստեղծ բուհի գործունեության մասին: Թերթի գործիչներն աչքաթող չէին անում նաև դասագրքերի, ուսումնական ձեռնարկների և ծրագրերի հարցը, պահանջելով պատասխանատու այդ գործը հանձնարարել միմիայն հմուտ մանկավարժներին: Թերթը հետաքրքրական հոդվածաշարեր է տպագրել Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի, Լազարյան ճեմարանի, Վանի, Պարսկաստանի, Պոլսի հայկական դպրոցների վերաբերյալ: Բժշկապետ Վ. Արծրունին և նրա գործընկերները առաջ էին քաշում նաև մատաղ սերնդի ֆիզիկական դաստիարակության անհրաժեշտության հարցը՝ դպրոցների հովանավորներից, հոգաբարձուներից և այլ ատյաններից պահանջելով միջոցներ տրամադրել նաև այս նպատակով:

1905—1921 թթ. «Մշակն» էլ, Արթուրունու նման, տարածաշրջանային ունենալով հայ հոգևոր գործիչների հետ, ոչ թե ժխտում էր լուսավորչական եկեղեցին ընդհանրապես, այլ ցանկանում էր այն ավելի կատարելագործված տեսնել:

Ոչ Թիֆլիսի Հայոց ազգային բյուրոն, ոչ քաղաքացիական այլ հաստատություններ ու բարեգործական ընկերություններ ի վիճակի չէին լուծելու հայ ազգի համար վճռորոշ հարցերը: Ահա թե ինչու «Մշակը» կամենում էր հայոց կաթողիկոսի և Կ. Պոլսի պատրիարքի պաշտոններում տեսնել Մատթեոս Իզմիրլյանի, Մ. Օրմանյանի, Զավեն արքեպիսկոպոսի, Ե. Դուրյանի նման հոգևորականների, որոնք ցուցաբերում էին վճռականություն, անկոտրում կամք: Թերթը վերոհիշյալ գործիչների ընտրությունների ընթացքում կոչ էր անում ժողովրդին զոհ չգնալ կուսակցական այս կամ այն սկզբունքին, այլ, իր իսկ շահերից ելնելով, ձայն տալ արժանավորներին: «Մշակը», ինչպես նաև մյուս կուսակցությունները, պայքարեց եկեղեցապատկան հողերը հետ վերադարձնելու համար, փախստականների տեղավորման, խնամակալության և ֆինանսական օգնության հարցերը վերապահելով կաթողիկոսին: Այս շէր նշանակում, սակայն, որ չէին քննադատվելու հոգևոր դասի մեջ սպրդած կաշառակերները, անգրագետ և ժողովրդի արյուն-քրտինքը ծծող գործիչները: Թերթն անաչառ էր այդպիսիների նկատմամբ և այս տարիների բազմաթիվ համարներ լեփ-լեցուն էին այդօրինակ նյութերով:

Հ. Առաքելյանի խմբագրության ժամանակ ևս բանավիճային պայքարում «Մշակը» ցուցաբերում էր մտքի սրություն, իրերն իրենց անունով կոչելու կարողություն, հասարակական իրադարձությունների ընթացքը կանխագուշակելու հմտություն, արիություն: Ժան Ժորեսի «Յումանիտեի»՝ 1905—1906 թթ. հայ-ադրբեջանական ընդհարումներին վերաբերող անիրավացի ելույթների քննադատությունից զատ, Թերթի գործիչները, որոնք տիրապետում էին մի քանի լեզուների, իրենց ձեռքի տակ ունեին շատ երկրների և լրատվական գործակալությունների, թղթակիցների ճշմարտացի հաղորդագրություններն այդ երկրներում կատարվող նշանակալից երևույթների և անցքերի մասին, կարողանում էին հերքել ստահող լուրերը, հայ ժողովրդի հասցեին արտահայտված անհիմն կարծիքները, միաժամանակ ըստ արժանվույն գնահատել բոլոր այն հրապարակումները, որոնք պարունակում էին իրական փաստեր: «Մշակը» պատասխանել է եվրոպական շատ երկրների մամուլի ելույթներին, հենց սկզբից չհավատալով երիտթուրքերի քաղաքականությունը, ձաղկել դրանց էջերում հրապարակված անհիմն ելույթները, պայքարել հայատյաց հողվածներ պարունակող օտարազգի այն հրապարակումների դեմ, որոնք միայն ազգային թշնամանք էին սերմանում հարևան ժողովուրդների նկատմամբ: Թերթն ընդարձակ տեղ է հատկացրել նաև մեր քաղաքական կուսակցությունների գաղափարախոսական պայքարին, բանավիճել է մասնավորապես Հայ հեղափոխական դաշնակցության մամուլի և նրանց գաղափարախոսների հետ, որ բացատրվում է մշակականների հայտնի չափավորությամբ:

«Մշակի» և հայ բուլճերիկների միջև պայքարը չէր խանգարում անաչառորեն գնահատելու նրա պարագլուխներից մեկի՝ Ստ. Շահումյանի գործունեությունը: Ավելին՝ «Մշակը» Հ. Առաքելյանի խմբագիր եղած տարիներին տեղ էր տալիս այդ գործիչների հողվածներին ու ելույթներին: Առաքելյանը Թերթը խմբագրեց մինչև 1918 թ. հուլիսի 9-ը, իր եղբրական մահը, երբ անհայտ շարագործների ձեռքով սպանվեց իր բնակարանում: Ստ. Մալխասյանցը այս առիթով դրում է. «Մարմինը կարող էր սպանել, բայց միտքը՝ երբեք» հողվածը, որտեղ Հ. Առաքելյանի սպանությունը որակվում է որպես չարաղետ ոճիր¹⁸: «Հայ ժողովրդին» կոչում մշակականները նրա մահվան մեջ որոնում են քաղաքական դրդապատճառներ. «Դուք սպանեցիք Առաքելյանին,

18 Նույն տեղում, 1918, № 132:

որովհետև դուք հանցավոր էիք նրա մերկացումներից: Ձեր ոճրագործությամբ դուք ապացուցեցիք, որ արդար էր Առաքելյանը, ձեզ անվանելով հայկական մաֆիա և ձեզ վերագրելով մաֆիական բոլոր ստոր հատկությունները...»¹⁴,

Կյանքից անժամանակ հեռացած խմբագրին թերթը բնութագրում է իբրև սկզբունքային և ուղղամիտ մի մտավորականի, որը մինչև վերջ պայքարել է իր համոզմունքի և գաղափարների համար, նպաստել հայ հասարակական ու քաղաքական մտքի զարգացմանը, ուստի և անաչառ պատմությունը պետք է գնահատի նրան: Հիրավի, այդպիսին էր «Մշակի» տաղանդաշատ խմբագիրը՝ Զ. Առաքելյանը:

АМБАРЦУМ АРАКЕЛЯН И «МШАК»

Л. А. АЛОЯН

Резюме

После смерти редактора газеты «Мшак» Григора Арируни в 1892 г. газета перестала издаваться. Вдова Арируни Марнам Мелик-Агамалян обратилась в цензурный комитет с просьбой утвердить Амбарцума Аракеляна редактором газеты, однако ей было отказано в просьбе, ибо деятельность Аракеляна-публициста не внушала политического доверия. Редактором газеты стал Ал. Калантар, а Аракелян — главным сотрудником. С 1910 г. Аракелян являлся соредактором, а с 1913 г., после смерти Калантара, редактором газеты по 1918 г. В эти годы перед армянским народом стояли важные общественно-политические, национальные и социальные задачи, требующие неотложного решения. На страницах газеты освещались вопросы, имеющие жизненно важное значение для армянского народа в канун и после Октябрьской революции.

¹⁴ Նույն տեղում, № 133: